**<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով**
**շրջանակային համաձայնագրերի միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հնարավոր**
**մասնակիցների ղեկավարներին**

*Հարգելի մասնակից*

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Հայաստանի Հանրապետության <<Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան Հ1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:
Սահմանվում է պարտադիր պայման՝ առաքումը մատակարարի կողմից:
Սույն հրավերի ծածկագիրն է հանդիսանում <<ԱՀԴ-ՇՀ-ԱՊՁԲ-15/1-87/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Արտաշատ, Աճարյան փողոց, շենք 1 (Արտաշատի Հ5 հիմնական դպրոց ) հասցեով, մինչև 2015թ.-ի մարտի 17-ը, ժամը՝ 13:00-ը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Արտաշատ, Աճարյան փողոց, շենք 1 (Արտաշատի Հ5 հիմնական դպրոց ) հասցեով, 2015թ.-ի մարտի 17-ին, ժամը 13:00:
Գնման առարկա է հանդիսանում <<Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան Հ1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռք բերումը:

<<Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան Հ1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի (3 չափաբաժիններից կազմվծ) տեխնիկական բնութագրերը, գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն հրավերին կից (Հավելված 3):

Մասնակիցները ներկայացնում են իրենց կողմից հաստատված, համապատասխանաբար մեկ բնօրինակ և երկու պատճեններից կազմված՝
ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
բ. գնային առաջարկ (Հավելված 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Գնային առաջարկը պետք է ներկայացվի տվյալ չափաբաժնի ընդամենը գումարով:
Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:
<<Այնթապի Արամ և Հասմիկ Կարամանուկյանների անվան Հ1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի գնումների մասով էլեկտրոնային փոստի հասցեն է՝ specialist.p@ya.ru:

**Հարգանքով՝**

**Տնօրեն՝ Լիլիա Շահբազյան**